



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ի ԳՐԱՅ

ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷԶՄԻԼԺՆԻ

Թ. 18.

1881

~~III~~
~~II-156~~

349a.

~~48~~
~~I-814~~

$\frac{9}{50}$

$\frac{76}{77}$

1233



ԿԵՆԴԱՆԱԳԻՐ

ԶԳԱՍՏ ԵՒ ԶԳՕՆ

ԱՆՁԻՆ

Արուստ Գրք.



Ի ԿԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ

ՌՄԶԵ

1285

551

1836

ՀԳՄ



Կ Ե Ն Դ Ա Ն Ա Դ Ի Ր

ԶԴԱՍՏ ԵՒ ԶԴՕՆ

ԱՆՁԻՆ

Եթէ զաչս յառեացուք ընդ ամ
ողորտս երկրի, մարթ ինչ իցէ ար-
դեօք նշմարել մեզ ինչ մի մեծա-
դոյն, կամ գեղեցկագոյն և կամ
սքանչելի առաւել՝ քան զիմաս-
տուն որ ճշմարիտ, կատարեալ ըզ-
գաստութիւն և զգօնութիւն. զոր և
ախորժեմք իսկ աստանօր յանդի-
ման կացուցանել:

Այդպիսի որ ի ձեռն ակնյայտնի
վկայուէ օրեղերաց աներկբայ հաւ-
տատեալ ի խորհուրդս իւր զգոյուի

բարձրելոյն՝ դերագոյն Իլին անեղի, զորոյ աշխարհ ամսատմէ ըզփառս, աւետարանէ զզօրութի նորա, և ցուցանէ զմեծութիւն տիրապէս, շարժի և ինքն անշուշտ՝ ի ներքուստ յերկիւղէն ան, որ սկիզբն է ամ զգոնութե, և զանգիտէ յահագին սրտոժոց՝ որք ամբարեալ կան անցելոց զօրինօքն ան. և առաւել զարհուրի յիրաց անտի՝ որ անհաճոյ են ան, քան յամ չարեաց աշխարհի :

Ի խօսել անդ իւրում զան, զկրօնից, և զորոց ի նոյն հային, առնէ զայն միշտ սլափառեղի ակնածութե, և արիաբար յետս ընկրկէ կամ յոչինչ գրէ զերգիծաբան նետաճգութիւնս ամբարշտաց : Ունի զանձապաշտութի ի սրտի առաւել քան ի բերանի. և որպէս չլինի անձնասպանձ ընդ այն, նոյնպէս և ոչ հնարի թաքուցանել զնոյն : Տի նա փառս անձին համարի ծառայել

Թագաւորին Թագաւորաց, քան իշխանաց և մեծամեծաց երկրի : Ոչ շինին ընդ ջերմեռանդն լինել կամ երևել : Թէ և ըստ օրինակին Տոբի Թայ ինքն ևեթ գտանիւր հաւատարիմ'ի հատուցանել տն զպարտս իւր : Չոր օրինակ անշարժ արձանացեալ կայ Վէմ ապառաժ ընդ գէմբուռն յորձանաց գետոց, այսպիսի տեսանի և այր իմաստուն : Ղի Թէսկետ և յամկողմանց շուրջ պատեալ իցէ յուղից ապականուածն, կայ մնայ անսասան՝ անսլարտելի ոգւով :

Բարեկամ գոլով ճշմարտութե՝ ոչ երբէք մասնիչ լինի նորա վասն իրիք բնաւին օգտի անձին : Ղի դրոշմեալ ունի'ի սրտի զգեղեցիկ խրատ ուրումն յիշխանաց առ որդի իւր : « Լաւ է մեռանել՝ քան ստել » : Յետ սամտաց Թողու զչարարուեստ ճարտարութիս բանից և գործոց : ուր ինքն ուղղութիւն կանոնաւորէ զըն-

Թացս իւր , և ճշմարտութիւն զխօսս
 իւր : Այնպէս հաւատարիմ է 'ի
 կատարել , որպէս խոհական 'ի խոս-
 տանալ . և ոչ առ խուսափելոյ 'ի
 պարտեաց միսի երբէք 'ի խորաման-
 կութի անարժան հաւատարմունք :

Միշտ պատրաստական է ձեռն
 տալ այլոյ , քաղցր և մարդասէր
 ընդելութիւն . բարեմոյն է առանց
 ցածութեան , և շահեցող սրտի բոլո-
 րից : Խելամուտ գտեալ՝ թէ քա-
 ղաքավար կեանք առիթ են փայլ-
 ման լաւութեց , մաքրասէր է ա-
 ռանց պճնուն : Չիք տեսանել 'ի
 նմա երբէք զանկարգ այլափոխու-
 թիս կրից , որ ատելի առնեն զմարդ
 և անբերելի . այլ զուարթ զնոյն
 միշտ վարէ հայեացս՝ անոյշ և ան-
 գորր , սիրուն աջալըջութիւն հանդերձ ,
 որ կից է ընդ անմեղութեան և հան-
 դարտութեան ոգւոյ : Ըստ օրինա-
 կին Սոկրատայ չայլայլէ զդէմս և
 զյեղանակ արտաքոյ և առանին :

Ի պէտս բարւոյ հասարակաց և ան-
ձինն՝ գումն դործէ հանապազ լինել
տէր անձին , յաղթել գթկամակու-
թեց և հաճոյից , և զառաջս առ-
նուլ շարժման բարկութե : Ի դեղ
դարմանոյ այսմ՝ տսէր ոմն յիմաս-
տասիրաց , պէտք են կանխել արթ-
նութ և խափանել , ոչինչ ընդ հատ
'ի հրոյ . վասն զի հանգոյն նմին բոր-
բոքի՝ թէ ոչ շիջուցէ ոք փութա-
պէս :

Առանց շահասիրութե՝ կարեկից
գտեալ մերձաւորին , հեռի պահէ
զանձն՝ ի հարստահարելոյ զաղքատն
պարտաւոր , առաւել յանձն ա-
ռեալ կրել զամ գեան , քան թշուա-
ռացուցանել զոք : Չտայ երբէք աչ-
խատաւորի սպասել վարձու իւ-
րում : Մեծութի և աղնուակա-
նութի համարի չունել պարտս , և
անգանդաղ հատուցանել՝ որոց
պարտական իցէ :

Քաջ կրթեալ՝ ի գիտել զիւր պար-

տիս՝ փոյթ գտանի՝ ի ընուլ զայն
 իբրև ծնող, իբրև տանուտէր, և
 իբրու տէր, առանց խստութեան,
 միանգամայն և առանց վեհերոտու-
 թիւ: Ընդոճինք նորա՝ թէպէտև սա-
 կաւաւորք, բարեբաստիկ զանձինս
 համարին ի ծառայել նմա. վասն
 զի վարի ընդ նոսա առաւել որպէս
 ընդ որդիս, քան որպէս ընդ ծա-
 ռայս: Յերկար ծառայուի նց յայտ
 առնէ զլիուլի վարձատրուի առ ի
 տեսունէ, և զլաւութի տեսուն իւ-
 րեանց. որ ոչն ունի զգաժանութի,
 և ոչ զտարապայման ընտանութի,
 այլ ակնարկէ ի նոսա իբրև ի մար-
 դիկ՝ թէև ստորինս ըստ վիճակի:

Առաւել ակն ածէ ի ծնողաց. վն
 զի ծերութի նոցա, առաւել սիրելիս
 առնէ զնս, և առաւել արժանիս
 ամ խնամոց: Քստմնի ընդ տեսանէլն
 զխորթացեալ զաւակս ոմանց, որոց
 ճոխացեալ մեծութիւն յամօթ հա-
 մարին զազգատոհմ իւրեանց, և ան-

գլխաւնալ զնոսա ձեանան: Պատուէ
 և յարգէ յոյժ զմատենագիրս իւրոյ
 ժամանակի. զի որպիսի և իցեն
 վաստակք նոցա, անձինք նոցա են
 միշտ պատկառելի:

Առաւել շարժի սրտիւ՝ ը բարին՝
 զոր ընդունի, քան ընդ չարիս՝ զոր
 կրէ. և յամ գէտս հնարի ցուցա-
 նել յանդիման ամենեցուն զնշա-
 նակս շնորհասպարտուէ: Յորժամ
 ձեռնհաս իցէ՝ փոխարինէ աւելի
 քան զոր էառն. և փութայ՝ ի լը-
 նուլ զայն, ոչ առ աղատանալ փութ-
 թով՝ ի բեռանց, այլ՝ ի հատուցա-
 նել զիղձ սրտի իւրոյ:

Առատաձեռն գոլով և մարդա-
 սէր և բարերար՝ իղձ լինի առնել
 զամ, որով գոհ և շնորհակալու
 գտանիցին այլք, այլ առանց շատ
 բաղձալոյ այդմ: Քեղեցիկ այս բը-
 նաւորուի՝ որով բերի բարերար լը-
 նել առ ամսին ըստ կարի, առնէ զնա
 պատուական պատկեր տոյ՝ ի վրերկրի:

Մեծապէս մեծ հաճութի իւր
 այն է՝ տալ և յառաջ քան զինդրելն
 իմա՛, կարի՛ աննման անհանճարից
 ոմանց բարերարաց, ոյք կորուսա-
 նեն զամ՝ վարձ չնորհին՝ զոր առնեն
 գծկամակ օրինակաւ. ուր սա յա-
 ւելու նոր իմն յարգ յերախտիս իւր՝
 յարելով՝ ի նոյն զազատական եղա-
 նակ։ Եւ զի չառնէ զբարերարութի՛ն
 ոչ առ սնափառութե՛ն և ոչ առ օգ-
 տածարաւութե՛ն, անիրաւութի և
 ասերախտութի այլոց չկարեն բե-
 րել նմա և ոչ դոյզն ինչ նախատինա։
 Մանաւանդ թէ յայնժամ առա-
 ւել յստակ համարի զիւր առատա-
 ձեռնութի, յորժամ երախտաւոր
 առ ասպաշնորհն գտանիցի։ Բարե-
 րարէ՛ առանց կամելոյ բարերարե-
 րելի։ Չիք բնաւին անձնացոյց լի-
 նել յերախտագործութիս նր, և ոչ
 նշանակ ինչ սլանծանաց. չտայ ինչ
 ումէք ՚ի ցոյցս մարդկան, բայց ուր
 անմարթ իցէ ծածկել զիւր բարի

օրինակ : Անդիտանայ ձախ նորա՝
 ըստ իմն առածի , զոր ինչ առատա-
 ձեռնէ աջ նր : Նման է գետոց մե-
 ծամեծաց , որ լռիկ քերեալ ան-
 ցանէն զերկրաւ՝ զոր ճոխացուցին
 առատ պտղաբերութիւն : Սիրէ նը-
 պաստամատոյց լինել փոխառութի-
 նելով՝ հանդերձ խոհական զգու-
 շութիւն . այլ 'ի մոռացօնս արկանէ
 զայդպիսի խոհեմութիւն , յորժամ
 կարօտութիւն ընկերին է հարկեցու-
 ցիւն : Պարտ անձին վարկանի առ-
 նել այլոց՝ զոր ինչ բանաւոր դա-
 տէր՝ զի այլք ինքեան տրասցեն :
 Որպէս ազատամիտ է առ 'ի նպաս-
 տել այլոց , նոյնպէս և քաջ ճանա-
 չօղ երախտեաց այլոց առ ինքն . վնջ
 և ըստ արժանւոյն երախտահատոյց
 լինի նոցա , և ըստ կարի իւրում փո-
 խարէնս մատուցանէ ծառայութիւն
 և վաստակոց և առաքինութիւն նոցին :
 Նախանձ՝ ախտ անարդ և դար-
 չելի՝ չունի 'ի նմա տեղի : Ազնուա-

կանուծի ողւոյ իւրոյ , և վսեմութի
խորհրդոց իւրոյ , և ուղղութի մը-
տաց՝ տան նմա ախորժ հաճութե
ակնարկել 'ի քանքարս , 'ի յաջո-
ղութս , և 'ի բարեմասնութիւն աշ-
ուոյ : Բարիս խօսի և զոսոխաց իւ-
րոյ , և ոչ միայն օտար է յաղօտա-
ցութեանէն զվայելին նոցա , այլ և
ինքն առաջին գտանի յընծայել նո-
ցա զարդարացի յարգ . և ոչնչայլ
իրաւացի ինքեան համարի , բայց
զիւրյթ լաւ ևս առնելոյ՝ զոր նոքա
բարիօք գործեն :

Հաւատարիմ աւանդատաճ գը-
տեալ գեղեցիկ գեղեցիկ մթերից ,
զոր բարեկամութիւնն գանձեաց 'ի
սիրտ նորա , որչափ ինչ անխոհե-
մութին կամ համարձակութիւն կոր-
դեալ իցեն 'ի սրտէ այլոց՝ ինքն ըզ-
նոյն ամրափակեալ սլահէ յիւրում
ծոցի , և չհանէ ինչ ընդ բերան՝ որ
կարօղ իցէ տալ և զգոյզն ինչ կաս-
կածանս :



Զոր օրինակ արթուն է և զգաստ
 'ի խօսս, նոյնպէս և յեղանակն խօ-
 սելոյ, որ չէ 'ի նմա բռնազբօսեալ
 խմտաթիւք, և ոչ կարի համարձա-
 կութիւնք. քանզի ընտրէ երևիլ մա-
 նաւանդ երկչոտ, քան յանդուգն :
 Չվարէ երբէք զձև վճռական և իշ-
 խանական, որ սեպհական է տգի-
 տաց : Թէպէտև առննթեր կայցեն
 ցուցակութիւնք, ոչ լինի վճռատու
 յիրս՝ որ հային 'ի պատիւ մերձա-
 ւորին, գիտելով թէ քանի անի-
 բաւ են յեղակարծ դատմունքն :
 Չառնէ զոք դատապարտ առանց
 լսելոյ նմին, բերելով յայսմ մասին
 զնմանուն Աղեքսանդրի մեծի՝ որ
 յունկն գնէ ըն միում կողման յա-
 տենի՝ եխից ձեռամբ զմի ունկն,
 ասելով, « Զմիւսն պահեմ 'ի պէտս
 միւսոյ կողման » :

Այր զգաստ՝ որ համեստն կոչի,
 փոյթ յանձին ունի խելամտութիւն
 կրօնի, որպէս նախկին և էական

քանի ըստ սլարտեաց, և օգտակա-
 րագունի և կարևորագունի քան
 զնամ խմաստուն. բայց ներքոյ դը-
 նելով վարդապետուն նորա զմիտս
 իւր՝ առանց գերի լինելոյ մտացա-
 ծին տեսութեց, գիտէ միօրինակ
 ծառայել և վստահ լինել ՚ի կրօն
 իւր: Խմաստնագոյն է և փիլիսո-
 փայագոյն քան զյուլովս ՚ի նոցանէ,
 ոյք զանուն կրեն փիլիսոփայի: Ոչ
 համարի, թէ ճշմարիտ խմաստա-
 սիրութին հաստատեալ իցէ յինք-
 նահաճ աղատութեան խորհելոյ ՚ի
 նիւթ կրօնի, որով ոմանք մերժեն
 զնամ՝ որ չէ ըստ մօի իւրեանց. այլ
 հաստատեալ կայ ՚ի դնել զսկար-
 լոյս քանին ՚ի ներքոյ անսուտ և ան-
 խաբ վկայութեն մոյ: Եւ ևս քան
 զլս ամրանայ յայս անձային հաւա-
 տըս՝ խելամուտ լինելով, թէ ստու-
 գապէս աւանդէ այն զանախեղծ
 վարդապետութիւն վարուց, աղդէ
 զլսութի տիրապէս կատարեալ,

և ընծայէ առաւելագոյն միջոցս ,
առ 'ի լինել ճշմարտապէս անձն
համեստ , սմին իրի պատուիրանք
նորին եւն կանոն գործոց իւրոց :

Աիրթ գոլով և 'ի սկզբունս մարդ-
կութեն՝ ջանայ առնել զիւր բա-
րին հաղորդական այլոց : Եթէ ու-
նի ինչ մի՝ յորում աջողուածն և
մեծութին կարօղ են հանդիսացու-
ցանել զազնուականութի ոգւոյ նո-
րա , այն է կարօղ լինել շատացու-
ցանել զայլս : Առաւել քաղցր , և
օգտակար , և պատուական գործ
վարկանի իշխանական ճոխութիւն
րում՝ շահել զսիրտս այլոց : Վասն
որոյ ոչ երբէք այնպէս գոհ գտանի ,
որպէս յորժամ մասնաւորէ կարօ-
տելոց զիւր բարիս՝ զորս տեսչու-
թիւնն վերին ետ նմա անխտիր 'ի
պէտս իւր և մերձաւորաց : Մեծա-
գոյն բաժնի արժանաւոր գտանի
աղքատութին առաքինի , ծերունի
խօթագին , մանկունի անտերունչ ,

և կարօտութիւն ունին զնախկին ի-
 րաւունս առ երախտիս նր, առանց
 'ի գուրս հանելոյ զայլ ևս տառա-
 պեալս : Պատուէ յանձինս ամ հի-
 քացելոց զմարդկութիւն ցաւագին,
 և փութայ ճեպի ձեռնտու լինել
 նմին, որչափ և ձեռնհաս իցէ կար-
 իւր : Ի կարկառել նոցա զաջ օգ-
 նականութե, չցուցանէ նոցա՝ որ-
 պէս առնեն յոլովք յամբարհաւաճ
 մեծատանց, դէմն խոժոռս . որ
 նկուն առնէ զառօղն, և շարժէ 'ի
 զայրոյթ : Յունայն իսկ արձակելն
 զնոսա՝ սիրողապէս վարի 'ի գը-
 թոյն . և այդ իսկ կարեկցութիւն
 նորա՝ որով ցուցանէ զանձն դորո-
 վել 'ի վերայ նոցա, այնպէս սփո-
 փէ զսիրտս նոցա, որպէս առատա-
 ձեռնութիւնն, օժանդակիչ : Իս-
 կապէս շահ համարի անձին՝ զոր
 միանգամ կարօղ է տալ, և կարի
 բարեբաստ վարկանի զանձն վասն
 կարօղ լինելոյ գնել զերկնից ար-

քայուլթին դիւրագին 'ի ձեռն ան-
ցաւոր բարեաց :

Նախանձայոյզ է իւրումնս պա-
տուոյ , և խնդամիտ ընդ բարի վարկ
այլոց զիւրմէ , ցորչաւի փառքն նոյ
և օգուտ մերձաւորաց զայդ պա-
հանջիցեն , կամ որչաւի պիտանի է
ինքեան : Սիրէ յայնժամ անարատ
պահել զիւր բարե համբաւութի , ուր
թէ ոք անտես առնէ զայսոսիկ , առ-
տոն հարկանէ զօրէնս հոգւոյն նոյ ,
դայլթակղեցուցանէ զմարդիկ , և
արժանի գտանի նամար համարհու-
թէ : Այլ պայծառ ճանաչելով
զիսկութի և զհիմունս ճշմարիտ պա-
տուոյ և փառաց , չդնէ 'ի մտի՝ թէ
առ այս 'ի դէպ իցէ զայրանալ և
խռովել ընդ դոյզն արհամարհանս ,
և շաղախել զանձն յարիւն թշնա-
մոյ , և լինել անմարդի ամենեւին :
Զորէ եթէ պէտք լինիցին՝ փր-
կութե անձին , զսնոտի փառս աշ-
խարհի , և յառի սերտիւ 'ի գեղեցիկ

պատասխանին , զոր ետ Բենեդիկտոս ժեբրորդ պատն առ դեսպան ոք՝ որ ժտէր 'ի նմանէ անիրաւ ինչ իրս . քանզի ասաց , «Եթէ էր իմ կրկին հոգի , մարթ էր ինձ զմին 'ի վտանգ արկանել վասն թագաւորին ձերոյ . բայց քանզի մի միայն հոգի կայ իմ , չկամիմ կորուսանել զայն » :

Էւ է դերաստիճան պատիւ , զոր զգօնն վերագոյն համարի քան զամ , թէպէտև չերևիցի ունել ինչ երևելի , այն է հանգամանք զգաստ և համեստ անձին : Ուղիղ է , և պարզ , և արդարակ , ոչ կամելով խաբել , և ոչ պակուցանել զոք : Լաւուի իւրանսուտ և անխախտ պահի , զի հիմնացեալ է 'ի վերայ կրօնի , որոյ հաստատուն սկզբունք նոյն են միշտ՝ որպէս դատաւոր և վկայ միանգամայն :

Չէ և չէ երբէք անձնամատն 'ի 'ի ցասումն , այլ փառս անձին հա-

մարի՝ անձին իւրում յաղթել։ Ներողամիտ լինի որպէս քրիստոնեայ, ճանաչելով զամ յարգ և զվարձ՝ որ կապեալ են ընդ ներքին անիրաւութեց։ Չցուցանէ իսկ իմանալ զտրմարդութիւն կամ զզրկանս ուրուք, և ոչ հոգայ ինչ զայսպանաց և զպերանաց, նմին իրի արդոյ համարեալ է յաչս գիտակաց զգօն քաղաքավարութիւնորա։ Թողու այլոց ասել զախորժելիս նոցա յիմարաբանութիւն, զգուշացեալ չասել ինքնին. քաջ գիտակ գտլով, զի անարդանք և թշնամանք անկանին միշտ յասելեաց վերայ, և զնոսա միայն անպատիւ կացուցանեն։

Եթէ յոչ կամաց գէպ լիցի ինքեան ունել զթշնամիս, բռնադատէ զնոսա՝ եթէ օրէն իցէ ասել, 'ի սէր իւր, և ոչ այլազգ քննականգիր լինի, բայց բարիս փոխաարելով չարարարաց։ Այն զի 'ի բարերարել այլոց՝ բարի առնէ անձին իւրում,

շահեւով զբարեկամունի, կամ գո-
նեա զբարի անուն առ 'ի մարդկա-
նէ. և որ մեծն է՝ զհատուցումն
առ 'ի յերկնից :

Իմաստունն ոչ խօսի շատ. զի
շատախօսն ոչ ումէք է հաճոյա-
կան, բայց միայն անմտաց : Գովե-
լին կենակցութիւն գիտէ խօսել և
լսել 'ի գէպ ժամու. այլ առաւել
լսող լինի՝ քան խօսող : Զի թէ-
պէտեւ ջան դնէ չխոտորիլ ծայրա-
յիդ, այլ սակայն ընտրէ մեղադրիլ
վն սակաւախօսուն քան բազմաբա-
նութն : Խորշի յանպէտ վիճմանց .
վն զի հասարակօրէն լինի յայնժամ
կորուսանել առաւել զսէր, քան
թէ շահել զճշմարտութի :

Իրագէտ գտեալ յանձին փորձոյ
և այլոց՝ թէ գիւրին է յոյժ սխա-
լել 'ի բանս, որոճէ յերկար 'ի սըր-
տի՝ զոր խորհի բարբառել, և ըզ-
գոյշ լինի չասել ինչ՝ որ կարող իցէ
գառնացուցանել զւծ, կամ զմար-

գիկ, և փնաս ինչ բերել ինքեան
 կամ այլոց: Աշուէլով նորա կանխաւ
 'ի կշիռս ընտրուէ զամ' զոր հան-
 դերձեալ է ասել, չունի սէտս սո-
 վորականին այնմ չքմեղութե, թէ
 ոչ այդպէս կարծէի: Տի' նա ունի
 շնորհս իմն սիրելի լինելոյ բանիւք
 իւրովք: Այնպէս գեղեցիկ վարի,
 զի 'ի կենակցուէ քաղէ զհաճունի
 զանձնէ իւրմէ, և զոչն լինել ան-
 հաճոյ այլոց: Գիտէ յարմարել զին-
 քըն բնաւորութե բոլորից և պէս-
 պիսութե վիճակաց, որչափ ինչ
 թողացուցանեն ինքեան վայելչու-
 թիւն և պարտականութիւն: Օտար
 գոլով 'ի պաշտելոյ զանձնասիրութի
 դժկամակութե այլոց՝ միշտ 'ի համա-
 րի ունի զոր ինչ այլք ասեն, և որ-
 պէս թէ'ի փոխ տայ նոցա զիւր ոգի
 'ի մեծացուցանել զնմ: Միշտ զը-
 ւարթահայեաց գտանի տեսիլ կեր-
 պարանաց նորա, և ձև բանից նորա
 միշտ է քաղաքավար, քաջ գիտակ

լինելով թէ այս են գեղեցիկ հնարք
սիրելի լինելոյ ամենեցուն :

Օգտէ յոյժ 'ի մեծ համարել զնա
և 'ի սիրելի առնել զկենակցուն 'նր
ունենի իւր զբարի բնաւորութիւն ,
որով 'ի լաւ անգր դատաստան առ-
նէ զայլոց , և իրաւունս տայ տկա-
րուն նոցա , և յարգէ զաւուրան ,
ոչ գիւրաւ հաւատալով զոմեքէ
ախտաւոր գոլ , վասն զի ինքն է
անախտ : Այլ ոչ վասն այսորիկ
յանզգաստից վատահ լինի 'ի վերայ
ամենեցուն . այլ թաքուն պահէ
յինքեան և եթ' զոր 'ի գէտ իցէ նմա
լուել :

Որպէս ոչ կամի միտլ յիրա այլոց ,
նոյնպէս և ոչ զիւրոցն խօսի ընդ
այլս : Ծածկէ զառանձին շահս ան-
ձին , այլ առանց այնպիսի ծածկա-
սիրուն' որ գթկամակեւ լին է , և ա-
ռիթ բանալոյ՝ զոր պէտք էին թա-
քուցանելոյ : Բացաւիայլ է կերպա-
րանն , այլ վակ շրթունքն և սիրտն :

Թէպէտև մեծատոհմ իցէ և մեծ
 ատուեն յոյժ, այլ ոչ սովիմք նա և
 ամբարտաւան և փառասէր. վասն
 զի բարձրամտուն է նշանակ՝ Թէ
 չէ այնպիսի, որպէս երևել կամի.
 և չիք ինչ այնչափ հեռի յարժանա-
 ւորութիւն գովուէ, որպէս հպար-
 տութիւն: Գիտել գիտէ, Թէ կա-
 րևոր է պահել զիրաւունս աշտիճա-
 նի իւրոյ, և զպատիւ անձին, այլ
 առանց ամբարհաւաճութիւն: Սմին
 իրի չպարծի երբէք ընդ աղնուա-
 տոհմութի իւր, և ոչ ընդ ընչեղունի
 իւր. այլ ցուցանի գեր ՚ի վերոյ
 քան զայս ամ անյիշատակութիւն:
 Չգովէ իսկ բնաւ զուշիմութի իւր
 և զհանճար, և ՚ի միտս անգամ
 չանկանին նր արժանիք անձինն.
 մանաւանդ Թէ ինքն միայն անդի-
 տանայ զսոսին, վասն որոյ և չխօսի
 ինչ: Մեծաշուք բարեհամբաւու-
 թիք և գեղեցիկ աջողուածք գոր-
 ծոց իւրոց չտան նմա կորուսանել

զիւր պարկեշտութի . և այնպէս իմն
 թուի՝ թէ ինքն անգէտ է իրացդ :
 Որչափ և բարձրանայցէ , սնապար-
 ծութի չվերանայ երբէք ընդ նմա .
 ուր ամ ոք հռչակ հարկանէ զբա-
 րեբաստութի նորա . և այն՝ վասն
 զի տեսանեն զնա ոչ բլշակնեալ նո-
 վին , այլ առաւել ակնյայտնի նըշ-
 մաբեն , զի պահէ 'ի մէջ այնչափ
 աջողութեամբ բախտի զպարզութի
 վարուց իւրոց , և զքաղցրութի և
 զվայելութի բարեմոյն բարուց ,
 որ սովոր է անհետ լինել յայնպի-
 սութեմ պահու :

Եթէ յանկարծ հասանիցէ նմա
 ձախողակ ինչ , և պատճառ վըշ-
 տաբեր յոյժ , կամ կորուստ անգար-
 մանելի , յիւրումն առաքինութե
 և 'ի կրօնասիրութե դտանէ միշտ
 դեղ դարմանոյ ընդդէմ ծանր ծանր
 վշտաց , և զդենու զօրութի նոր առ-
 'ի զդէմ ունել ևս ծանրագունից :
 Յանձին նորա է տեսանել զկամաս-

տունն զառ ՚ի Սենեկայէ նկարա-
գրեալ՝ որ գօտէմարտեալ ընդ բախ-
տի՝ նշան յաղթուէ կանգնէ արիա-
կան ոգւով. այն իսկ է տեսարան
պանծալի՝ ապշեցուցիչ որդւոց
մարդկան։ Ո՛չ որպէս թէ ունիցի
սա յայն դէպս զծաղրականն զան-
դդայուի իմաստնոց հեթանոսաց,
ոչք մեծաբանէին տեսանել առանց
ահալիւտ լինելոյ զգլորդիւն և ըզ-
կործանումն համաշխարհական։
Այլ զի թէպէտև տխուր պատա-
հարք և ուժգնուի ցաւոց շարժեն
զսիրտ սորա, բայց ոչ սրտաբեկեն,
վշտագնի, բայց ոչ խռովի. վերա-
դոյն է ամ անցից, վտան զի գիտէ
ներքոյ արկանել նոցա զանձն իւր.
հանապաղ համակամ և հլու ընծայ-
ելով զինքն ամի, զոր տեսչութիւն
այ տնտեսէ զնմանէ։ Անիրաւունն
գլխովն որդւոց մարդկան առ նա՝
ոչ բերէ նմա զարմանս. վտան զի
արդէն պատրաստական կայ ինքն.

և 'ի թշուառութիւնս իւր չինդրէ
 զառ 'ի յայլոց կարեկցութիւն, և ոչ
 ձանձրացուցանէ զոք՝ պատմելով
 զաղէտս իւր. վասն զի գթուարին է
 յերկար քանքարտալ առանց տաղու
 կացուցանելոյ զլսելիս . և բազում
 այն է, զի առաւել ամօթ բե-
 րէ՝ քան օգնութի՝ ազդէլն յայլս
 զառ ինքն կարեկցութիւն : Հաստա-
 տուն և քաղցր միսթարութի գտանէ
 նա 'ի գիրկս ւայ միայն . նմին իրի
 չնեղէ վայրասպար զմերձակայս՝ վն
 նեղեալ գոլոյ իւրոյ . և թէ չկարէ
 չղգալ զաղէտս իւր, գէթ զգուշա-
 նայ զգացուցանել զայնայլոց : Համ-
 բերուք տանի պակասուէց նոցա,
 ընդ որս հարկ է նմա կենաց կցորդ-
 լինել . գուն գործելով միանգա-
 մայն ըստ կարի, զի մի կարօտ լիցի
 և ինքն ներողամտութեւ այլոց : Մա-
 նաւանդ ջանայ հանապազ՝ որչափ
 և կարէ՝ ուղղել յանձին, զոր ինչ
 գիտէ անհաճոյ լինել այլոց, և խո-

հարհէլ զանձն լաւագոյն օրինակաւ
 'ի կամս նոցա, գիտելով՝ թէ չիք
 ինչ այնչափ այստանելի, որպէս սըն-
 դիլ առ յինքն ձգել զամենեւին, և
 չկամել երբեք յարմարել զինքն այ-
 ւոյ :

Չարիք և կարիք՝ յորոց անկարա-
 նայ 'ի սպառ ազատանալ առաքի-
 նին, տան նմա կարեկցաբար բե-
 րիլ առ այլս : Նեղեալքն 'ի թը-
 շուառուէց, առաւելապէս բարե-
 կամք և ծնողք իւր, գտանեն միշտ
 սփոփութի 'ի լաւուն սրտի նորա,
 և ձեռնտուութի 'ի բարերար բնուն
 նորա, և նեցուկ ամբուն 'ի մտեր-
 մութի նորա : Այնպիսին հնարի
 կամ անձամբ կամ 'ի ձեռն այլոց,
 որչափ և ձեռնհաս իցէ՝ առնել բա-
 րիս, առանց ստնանելոյ ումէք եր-
 բէք : Չվարէ նա զիւր կարողութի
 կամ զմեծութի 'ի կողոստել զորքս
 և զայրիս, 'ի հարստահարել զան-
 աւագս, 'ի կոխան առնել զտառա-

պեալնն . այլ առաւել ցանկալի էր
նմա ընչեղ և մեծազօր լինել՝ առ 'ի
կարօղ լինելոյ սաշտախն կալ և
ձեռն տալ ամենեցուն :

Ուշ եդեալ 'ի դիտել զսպասա-
սուծիս իւր առ միւսանդամ չան-
կանելոյ՝ միա դնէ առաւել զանձն
իւր ուղղել՝ քան զայլս . և ցորչամի
սլարտական իցէ յանդիմանել զօր
կամ սլատուհասել , քաղցրութիւն
իւրիք և լաւաբարոյութիւն առնէ զայդ :
Թերութիւն մարդկան՝ յորս ակնարկէ
իբրև 'ի տխուր ժառանգութիւն ողորմ
մարդկութեան , շարժեն զնա 'ի ցա-
ւակցութիւն : Եւ յերաւի . միթէ կա-
րիցէ՞ ոք 'ի խորս իջանել սրտի իւ-
րոյ՝ առանց նշմարելոյ անդ զսկըզ-
քունս ամենայն տկարութեց , զորս
յայլս ստգտանէ : Սորին վասն նա-
խանձաւորութիւն իւր՝ զոր ունի ցու-
ցանել 'ի յանդիմանելն , չէ՞ և չէ՞
երբէք ժանտ կամ դառն , և կամ
խիստ . զի այդոքիկ չեն իմիք սիւ-

տանացու, բայց 'ի խստասրտութի
տանեւ զյանցաւորն: Ի կիր արկա-
նէ զտոկունութի՝ երբ պիտոյ իցէ,
այլ ոչ երբէք զզայրոյթ սրամտուն.
վասն զի բարկացողն պատժէ յան-
ձին զայլոյ յանցանս, և ոչ եթէ
ուղղէ զնոյն:

Զգօնն գովիչ լինի այլոց մտա-
դիւր. այլ չէ զեղև 'ի գրուպաիս:
Արժան դատի ըստ արժանեաց և
ըստ առաքինութեւ և եթ հատու-
ցանեւ զգովութեա, և զայն պար-
զութիւ և անկեղծութիւ՝ ըստ յստա-
կութեւ սրտի իւրոյ: Զոր օրինակ
վասն լաւութեւ ձրից իւրոց՝ որ 'ի
բնութիւ և որ 'ի բարեբաստութիւ,
չունի մեծ ինչ վարկ զանձնէ իւր-
մէ, սոյնպէս ևս չակնարկէ արհա-
մարհանօք ընդ նուազութի նորին
'ի սիրելիս իւր, և ոչ ցասնու՝ բայց
միայն ընդ ախտաւորութի: Թէև
խնդրիցէ սիրելի լինեւ և ակնածե-
լի՝ մանաւանդ յարդոյ արանց, 'ի

տալ անդ զնշանակ իւրոյ յարդի
առաջի անարժան եղելոց՝ ջանայ
չլինել ատելի սւմ և իցէ իւլիք ար-
համարհութիւն . վասն զի առելուն
աստի յառաջ եկեալ է անդարմա-
նելի քան զսւմ , և առաւել կարօղ
են թշնամիք ինասել մեղ , քան օգ-
տել բարեկամք :

Կատակք և խաղք բանից չընդ-
ոստուցանեն և չխառլեն զնա եր-
բէք . զի սիրտ նորա է բարեկարգ ,
որ զսւմ ինչ 'ի լաւ անդր առնու .
և ոչ այլայլի իբրեւ ընդ չար՝ տալով
զսուտ մեկնութիւն բանից և գործոց
այլոց : Եւ եթէ ծաղր խի առնիցի
կսկծելի բանիւ , կամ զգօնութիւն
չիմանալ կարծեցուցանէ , և կամ
ճարտարութիւն 'ի գերեւ հանէ :

Անձն զգաստ և զգօն խորշի յա-
ռանձին ընտանութեց , որք կարեն
կամ ապականել զսիրտ , և կամ
խանգարել զոգին : Ո՛րչափ և ա-
խորժ թուեսցի ընկերութիւն ոմանց

ոմանց անկրօնից և խառնակեցաց :
 այնչափ առաւել երկնչի 'ի նոցա-
 նէ : Եւ ո՞ր գիտէ լաւ ևս ընդեւ-
 ցուցանել զմեզ 'ի սիրել և յընդու-
 նել զսկզբունս բարեկամաց մերոց ,
 ուր հաճութիւն զոր ունիմք 'ի կե-
 նակցիլ ընդ նոսա՝ տայ մեզ առ-
 փոքր փոքր լաւ համարել և զոր
 անգոսնելի իցէ 'ի նոսա : Սմին իրի
 զանգիտէ նա , թէ գուցէ առաւել
 ասպականեսցի յասպականեալ ըն-
 թացից նոցա , քան եթէ ահն ու-
 նիցի ձգել զնոսա իւրև յառաքինու-
 թի . յար և նման այնմ , զի սլտուղք
 արդէն փուտք՝ տան լաւացն զիւ-
 րեանց փտութիւն աննորոգելի : Նո-
 վին սլատճառաւ՝ ոչինչ ընդհատ
 յերկիւղէ տաղտկութե և անհամ-
 բերութե , խոյս տայ և ևս 'ի կե-
 նակցուէ շաղաւաշուրթն և իմաս-
 տակ արանց . և զի ախմարութիւ և
 իմաստակութիւք թուին նմա կա-
 ըի ծաղրականք յայլս , նմին իրի



դուն գործէ անձնասպահ լինել ի
բրև 'ի թերութեց դէմ ընդդէմ ե-
ղելոց իւրումն սլարդութե և հա-
մեստութե :

Իմաստունն և խոհականն յըն-
տրութե անդ բարեկամաց՝ խնդրէ
ոչ զբաղումս ունել, այլ զլաւս :
Ակնարկելով 'ի բարեկամուի անդր
իբրև 'ի կարի սլատկառելի ինչ և
սլատուական յոյժ յոյժ, որ չէ ծա-
խելի շռայլաբար, իրաւամբք դնէ
'ի մտի՝ թէ ուր իցեն բազմութիւնք
բարեկամաց, նուազ է անդ բարե-
կամութի : Սմին իրի չկամի զբա-
ղումս, այլ զայնոսիկ ևեթ՝ որք
ստուգապէս արժանիք իցեն սի-
րոյ : Եւ չընծայէ նոցա զիւր վըս-
տահութի և զբարեկամուի, եթէ
ոչ յետ ընդերկար փորձոյ. վասն
զի ունի տալ նոցա զայն ցերկար
ժամանակ. իբր զի որպէս դժուա-
րաշարժ է յընդունել, նոյնպէս և
'ի թողուլ զբարեկամս : Ոչ ուրեք

է անողորբելի, բայց միայն ընդդէմ
ախտի, վասն զի բարեկամութիւն վատ-
թարաց է մնասակար, և բերօղ ան-
սպասուութիւն : —\

Իրազեկ գոլով թէ առ 'ի լինե-
լոյ բարեհամբաւ սխտի կենակից
լինել ընդ արդոյ անձինս, խնդրէ
զընկերութիւն և զառնչութիւն ընդ հա-
մեստս 'ի մարդկանէ, և այն՝ նա-
խապաաիւ առնելով միշտ զզուգա-
հաւասարս իւր՝ քան զորս իցեն
կարի վերագոյն կամ կարի ցածա-
գոյն քան զինքն, վասն զի ընկե-
րութիւն յետնոցս անսպաաիւ առնէ
զինքն, իսկ առաջնոցն՝ գերի նո-
ցա, կամ արհամարհ յաջս նոցա :

Այր զգատտ և սլարկեշտ ոչ եր-
բէք ասէ ինչ, որ կարող իցէ մնա-
սել բարեհամբաւութիւն այլոց : Գի-
տէ քաջ, զի չաբախօսութիւնք եր-
բէք երբէք եղեալք անդուռն բե-
րանով առանց որոճելոյ զհետեանս՝
հասարակօրէն կարեւոր խոցեն, և

ոչ իսկ անգիտանայ, թէ մեծ մասն
 թշնամեաց է գրեթէ միշտ յառաջ
 եկեալ 'ի չարութիւն կամ յանխո-
 հեմութիւն լեզուի: Սմին իրի ախոր-
 ժէ ասել զայլոց՝ զոր ինչ լաւութիւն
 նշմարէ 'ի նոսա, և լուէ զչարիսն,
 եթէ ոչ 'ի վերայ կայցէ պատճառ
 'ի վեր հանելոյ՝ հարկեցուցիչ ամ
 իրօք: Եթէ պարտ վարկանիցի խօ-
 սել երբէք զմոլութեց և զսակա-
 սութեց որդւոց մարդկան, զգոյշ
 լինի չտալ 'ի դուրս զոք յանուանէ:
 Թող զորս հրապարակաւ վատա-
 նուն իցեն՝ եղծիչք համաւոյ ան-
 ձանց իւրեանց: Սիրէ բարիս խօ-
 սել և զիւրոց թշնամեաց անգամ,
 և որ մեծն է՝ խնդայ, յորժամ և
 այլք բարիս բարբառեսցին զնոցա-
 նէ: Ոչ միայն չասէ չար զայլոց,
 այլև չթողու իսկ այլոց խօսել ա-
 ռաջի իւր, որով և ինքն իրաւունս
 ստանայ՝ զի ոչ ոք չարախօս լինիցի
 և զինքենէ:

Աի ազնուական խորհրդով ոչ
 միայն յետին ցածուի համարի զխա-
 ծատումն հեռաւորաց, այլ և այնմ
 գիտակ է՝ թէ չէ՞ օրէն այսպա-
 նել և զյանգիմանակացս : Ընդ
 խաղ ինչ ասէ երբեմն՝ ի զուարճու-
 թի ընկերութե . այլ այնպէս՝ զի
 ամենեքին խնդայցեն ընդ նմա , և
 մի ոք իցէ՝ որ լայցէ . իբր զի հեռի
 է ամենայնիւ յերգիծաբանից ան-
 տի , ոյք լաւ համարին կորուսանել
 զբարեկամ՝ քան յետս կալ՝ ի խեղ-
 կատակութենէ իւրեանց : Թող զի
 ճշմարտեալ գիտէ , թէ զգուշանալն
 երբեմն ի ծախելոյ զբովանդակ ո-
 գին՝ է յայտնի նշանակ , թէ շատ
 ոգի լաւութե բունեալ կայ անդ :

Օտար գոլով յամբարհաւած ո-
 գւոյ անմտաց , որ չկամին երբեք
 խորհուրդ հարցանել , կամ ընդու-
 նել զայլոյ խրատս . ոչ մոռանայ՝
 թէ մարգկայինս տկարութի միշտ
 դեղւի ընդ լոյս և ընդ խաւար . նմին

իրի ոչ բուռն հարկանէ ղկարևորաց
 առանց խորհրդակցութե ընդ իմաս-
 տուն և ընդ հանճարաւոր անձինս :
 Եւ եթէ խորհուրդ տայցեն բարե-
 կամք՝ թէ անվրէպ է քո մտածու-
 թիդ , փոյթ 'ի մէջ առնու քաջ ըն-
 արութի առնել ընդ բարեկամ և
 ընդ մարդէլոյդ : Քննէ և որոճէ զա-
 ռեալն զխրատ , համարելով՝ թէ
 թէպէտ և իմաստուն մարդոյ է խոր-
 հուրդ հարցանել յայլոց , բայց չէ
 միշտ բարի 'ի վար արկանելն զայն :
 Առաւել խորհրդառու լինի՝ քան
 խորհրդատու . վասն զի լաւ է միշտ
 խրատ առնուլ քան տալ : Յաւէտ
 ևս 'ի դատս կարևոր վարկանի խոր-
 հուրդ հարցանել 'ի քաջահմուտ
 եղելոց , և ոչ միտի յայն դիւրաւ .
 վասն զի հեշտ է սկիզբն առնել այնմ՝
 քան 'ի գլուխ տանել , և առանց
 ցուցանելոյ զերկիւղ ինչ՝ հնարի
 յիւրմէ կողմանէ չմտանել ընդ ու-
 մեք 'ի դատ :

Առանց կանխաւ երկմտելոյ կամ
կասկածելոյ ոչ լաւ համարի հա-
ւատս ընծայել ամենեցուն, մա-
նաւանդ անժանօթ եղելումն. վա-
րէ միշտ զխոհական ծանրութիւն և
առ բարեկամս գլխովին, մինչև յետ
բազմապատիկ փորձոյ արժանի գըտ-
ցին աներկբայ վստահուէ իւրում:
Ահն ածէ բարեկամութե բոլորից,
բայց չվստահանայ դրեթէ և ոչ
միումն. վասն զի սակաւք են՝ որ
կամիցին և կարիցեն օգնել, ուր ա-
մենեքին մարթին փնասել:

Անվստահ է և յանձն իսկ իւր և
'ի սիրտ իւր, որ կարի դիւրապատ-
րաստ է անձնամասն լինել, և թո-
ղուլ զինքն յաղթիլ 'ի խաբեպատիր
իրաց: Չանդիտէ 'ի սայրասլտք նե-
տից սիրոյ, և 'ի փախուստ աճա-
պարէ, որով լինի անշուշտ յաղթող
հանդիսանալ: Չէ յանդուգն յանձ-
նապաստան, որպէս թէ կարող իցէ
յաղթել անձին զօրութիւն ամ գծուա-

րին սրատերազմաց . այլ խնդրէ ա-
ռաւելապէս զառ 'ի յերկնից օգ-
նականութի , որ ամենայնիւ հար-
կաւոր գտանի ընդդէմ այնպիսի
թշնամեոյ , որ դիւրաւ յաղթէ սո-
վորաբար մերումն տկար խելաց՝
յորժամ 'ի մեզ թողեալ լիցուք :
Միթէ յետ տեսանելոյ զողորմ գը-
լորումն Խմաստնագունին 'ի թաղա-
ւորս , և զայլոց բազմաց՝ որոց ի-
մաստութիւն ընդհարեալ յայս ժայռ՝
յօրհասական 'ի մահ վերաւորեցաւ ,
կարօղ իցէ այլ չերկն չեւ ևս քան զևս :
Բստմնեւ ի երևի նմա և ախտ
գինեհարուն . վասն զի միշտ գող-
ցես համախոհ գտանի ընդ հեշտախ-
տութե : Եւ յոլովակի գիշատէ ընդ
իւր զբազումն , և յանկարծ խար-
դաւանէ զնոսա 'ի խորխորատ , զոր
նա փորեաց հետ զհետէ 'ի ներքոյ
գողգոջոտ ոտից հետևողաց զկնի
անմտուն նորա : Ապա ուրեմն ըզ-
գաստն և զգօնն ըմպէլ ըմպէ զգի-

նի առ զօրացուցանելոյ զխելս , և
 ոչ վասն կորուսանելոյ . վասն զի
 ամօթ մեծ գրէր անձին յայնպիսի
 զառաժանիլ վիճակ , յորում ոչ ևս
 լինէր նմա որոշիլ յանբանէ , եթէ
 ոչ առաւելագոյն անկարգութիւն և
 մոլեգին գաղանուք . կամ թէ նմա
 նօղ լինէր մանկան տղայոյ անհե-
 թեթ ընթացիւք :

Խաղայ երբէք երբէք . և այն՝
 'ի հաճել զայլոց հրաւերս՝ քան
 թէ զիւր յօժարութիւն : Բայց չէ
 այնպէս յիմար , մինչև 'ի պատճառս
 խաղասիրութեան վատնել զիւր ժա-
 մանակ և զգոյս և զառաքինուիս :
 Արգելեալ գիտէ զամենայն խաղս
 կապեալս ընդ լոկոյ բախտի , յորս
 անմարթ է միսիլ առանց յանցաւո-
 րութեան կամ դժկամակութեան :

Չամիաւոր գտեալ 'ի քուն , և
 'ի կերակուր , նոր ոյժ զգենու յայս-
 ցանէ , և տոկուն առողջունի , զոր
 մարթ էր այլայլել կամ կորուսա-

նե՛լ տալով զանձն յանչափութիւնս :
 Զգոյշ լինի մանաւանդ 'ի շուայ-
 տութե՛լ , վասն զի զեղխութի կե-
 րակրոց 'ի թոյն փոխէ և զառողջ-
 արարս 'ի հոցանէ : Աւնու միայն
 զայն ճաշակ քաղցրութե՛ն , զոր ետ
 օրինադիրն բնութե՛ն ան . ոչ 'ի սակս
 զգայական ցանկութե՛ն , այլ 'ի կա-
 րևոր սէտս սննդեան : Միանգամայն
 սփռուի փակ զզգայութիւն և մաքրա-
 զարդէ . վասն զի հարկաւորեալ 'ի
 մատակարարել 'նոցա զպիտանիս 'ի
 սնունդ , ուտէ ո՛չ 'ի հեշտանալ ,
 այլ յարծարծանել զզօրութիւն իւր ,
 և 'ի կալ մնալ 'ի վիճակի կատարե-
 լոյ զսարտս իւր : Յարդն սլառճա-
 ռաց զայսօրինակ աղնուացուցանէ
 զիւր գործողութի :

Եթէ ասորժէ երբեք խաղալ ,
 քանզի առաքինութիւն չէ թշնամի
 անմեղ և կարգաւոր զբօսանաց ,
 առանց կրից առնէ զայդ՝ աղնուա-
 բարոյ իմն հանդարտութե՛ն . իմն այն-

պէս, զի աջող կմ՝ ձախող եւք խա-
ղուն չայլայլեն զնորա գէմս. և որ-
պէս շահն՝ նոյնպէս և կորուստն
նոյն միշտ գտանեն զնա : Զգուշա-
նայ ճշուցանել 'ի խաղի անդ տմար-
դի յամառուն ինչ 'ի պնդել զիւր ի-
րաւունս ընտրէ առաւել ատղի տալ
երբեմն օսոխի իւրում, քան ըստ
գտանելի լինել 'ի կամիլն միշտ յաղ-
թող լինել յիրաւունս անձինն :

Ի մանկուէ ատեայ զնայլուէ,
որ ունի կապտել զնա յընչից կարե-
ւորաց 'ի գիւրուի յերկար կենաց,
և 'ի ծերութե ոչ խնդրէ կուտա-
կել զգրամս. զի գիտէ՝ թէ չիք ատ-
ղի շատ երկնչելոյ 'ի պակասութե
պիտոյից, զի սակաւ աւուրք կե-
նաց մնան նմա : Զամենայն ժամա-
նակս իւր ջանայ միօրինակ հեռի
լինել յանմիտ շռայլուէ, և 'ի փրցուն
ազահուէ, վասն զի անդ վախճան
հասանէ առաքինուէ, ուր սկիզբն
առնէ առաւելազանցութի :

Ճարտար գիտէ զյարգ ժամանա-
կին՝ խմաստութիւնն 'ի նոյն ագահե-
լով, և գուն գործելով 'ի շահ վա-
րել զամենայն վայրկեանս նորա :
Սմին իրի հանապազ զբաղեալ է յիրս
ինչ . և ծանր է յոյժ նմա կալ տ-
ռանց հաստատուն գործաւորու-
թիւն : Վասն որոյ անգործունն , որ
տանջէ զամենայն մարդ ոչինչ ընդ-
հատ 'ի տրտմութիւն , և իշխէ տանել
զիւր թոյն մինչև 'ի գահ արքունի ,
չիշխէ մերձեւսլ առ խմաստունս .
որոյ լցեալ օգտակար , և առաքինի
զբաղանօք զամենայն ընթացս կենաց
իւրոց , նոքիմք կազմէ զոսկի շրջ-
թայաշարս ճշմարիտ զուարճութեց :

Զգօնութի իւր ոչ տխուր է , և
ոչ մարդաստեաց , այլ միշտ խնդամիտ
և սիրելի . ոչ որպէս թէ ունիցի
զուրախութիւն անշնորհ նման յիմա-
րուն . այլ զայն ախորժելի և հան-
գարտ զուարթութի , որ տայ յան-
ձին զգալ զբաղցրութի բարեւա-

ւութի իւրոյ : Զուարճուիք նորա
 ունին և զայս ևս առաւելութի, զի
 եւն մաքուր և յստակ, զի ոչ ձգեն
 զհետ իւրեանց զպատիժ կամ ըզ-
 խայթ խղճին : Ոչ այլազգ վարէ
 զնոսին, եթէ ոչ որպէս ինչ մի կազ-
 դուրիչ տկարութի իւրոյ կարգեալ
 'ի բնէ, և ոչ իսկ տայ զանձն 'ի զը-
 ւարճալիս, բայց յետ կատարելոյ
 զպարտս իւրոյ վիճակի : Անհրա-
 ժեշտ օրինօք անձնատուր 'ի պար-
 տականութիս իւր՝ չհանգչի սիրտ
 նորա եթէ ոչ լըցէ զամենայն լիով :
 Անդորրութի ոգւոյ ծագէ 'ի նմա
 ստուգութի 'ի ներքին վկայութի
 մաքուր խղճի մտաց, որով վայելէ
 զնա կատարելագոյնն ամենայն հա-
 ճութեան, այն իսկ է անստգիւտ քտա-
 նիլն : Եթէ գիպեսցի նմա երբեմն
 մարդկօրէն 'ի մոռացօնս արկանել
 կամ անհոգանալ յայն ինչ՝ յոր
 ճշգիւ պարտաւորեալ իցէ, ոչ նե-
 րէ անձին իւրում՝ որպէս այլք առ-

նեն , այլ փութայ դարման տանել
 ֆնասուն ըստ կարի վաղադոյն : Կ

Միշտ գոհ գտեալ զարարէ բը-
 նութե , և միշտ օրհնաբանիչ նորա
 յամենայն 'ի գէպս բախտին , յա-
 մենայն անցս պահէ զայն չափաւո-
 րութի բաղձանաց , որ սեպհական
 է առաքինեաց . իբրև աղբիւր ա-
 կանակիտ ճշմարիտ երջանկութե՝
 զորոյ զճաշակ մարթ իցէ առնուլ
 յաստիս : Մեծ բարի զայն վար-
 կանի , զի մի՛ սաստիկ տենչ ունիցի
 իմեք , և գիտացէ 'ի սահմանի պա-
 հել զանձն : Այս չափաւորութիւն
 ազատ կացուցանէ զնա 'ի յոլովութե
 պիտոյից , զոր ըստ մտի հնարեցին
 որդիք մարդկան : Զխմոտատասիրին
 երկրորդէ բարբառ . « Բաբէ որչափ
 իրք են , որք չեն ինչ ինձ պիտոյ » :
 Շատացեալ այնու՝ զոր ունի , չկա-
 մի փոխել զիւր սակաւապիտութի
 ընդ փքալից ճոխութե :

Շողիւն մեծութե և փարթա-

մուէ ոչ զօշոտէ զաչս խմաստնոյն .
 վասն զի դիտէ նա տալ զարդարացի
 գին մարդկեղէն իրաց՝ քաջ ճա-
 նաչելով զունայնուի նոցա : Ազատ
 'ի միառասիրութի , և շատեալ իւ-
 րով նուաստութի , ոչ յօժարի բարձ-
 րանսլ և վտանգիլ յառտիճանս ա-
 ւագաց , և դնիլ յարհամարհուի :
 Ոչ հառաչէ երբէք 'ի պատիւ ինչ
 վսեմական , և ոչ յանձն առնու ,
 եթէ ոչ յառաջ ձգեսցի 'ի ձրից
 անձինն , կամ հրաւիրեսցի 'ի հրա-
 մանաց վերնոց : Փախչի յաւագու-
 թէց՝ քան եթէ 'ի խնդիր ելանի-
 ցէ . և երկնչի միշտ 'ի վախից՝ որ
 անդ գտանին , քան եթէ ամօքիցի
 յօգտակարութեց նոցա :

Ոչ ցանկայ ստանալ ինչս բա-
 զումս . վասն զի սովորաբար նոքիմք
 ընի ստանալ և զբազում նեղու-
 թիւնս : Անհանգիստ առնեն ըզ-
 մարդ 'ի խնդրելն զնոսին , և ոչ շա-
 տացուցանեն 'ի ստանալն . և ցաւս

ևս 'ի վերայ ածեն 'ի կորուսանելն :
 Արդ զիարդ ցանկասցի նոցին : Մի-
 թէ ոչ ունի ինքն յանձին իւրում՝
 զոր ինչ նոքա խոստանան , այլ ոչ
 տան : Բայց ոչ անդոսնէ և զինչս
 գլխովին . քանզի յոլովակի 'ի բա-
 րոյ մասին գտանին , և մարթին
 բարեոք անտեսիլ : Ոչ համարի՝ թէ
 ճշմարիտ զգօնութին եդեալ իցէ
 յարհամարհելն և եթ զինչս , և չա-
 սէ իսկ զայդ . բայց չդնէ 'ի մօտի ,
 թէ երջանկուի իւր կախեալ կայ-
 ցէ զնոցանէ . վասն զի ոչ յայլ ինչ
 պիտանացու համարի զինչս , այլ
 'ի պէտս կարեորս :

Այս խորհուրդք են առն իմաս-
 տնոյ : Բարի համարի զամենայն
 արարածս նայ 'ի վերայ երկրի . այլ
 ոչ արժան գատի մարդոյ դնել 'ի
 նոսա զիւր երջանկութիւն , 'ի միա
 առնու՝ թէ ան զհոգի մարդոյ ա-
 րար մեծ յոյժ , և անյագ 'ի բաղ-
 ձանս սրտի իւրոյ , մինչև չնուլայ .

ըով իւրք, բայց միայն անսահման
 իսկութիւն բարձրելոյն. և այս իսկ
 անսահմանութիւն յոր բերին ուխտք
 սրտից նորա, երաշխաւոր լինի ին-
 քեան առ իմաստասիրել, թէ աղ-
 ցաւոր և անցաւոր բարիք կենցա-
 ղոյս չեն կէտ նպատակի ընթացից
 իւրոց: Այսու օրինակաւ ամբար-
 ձեալ զխորհուրդս և զյօժարուիս
 իւր մինչև յաթոռն նոյ, պաղատի
 առ նա՝ առաքել առ ինքն զճառա-
 ւոյն իմն յիւրմէ ծայրագոյն իմաս-
 տուէ, որով տնտեսին տիեզերք ա-
 մենայն. ուն զի մարթասցի զգօնութիւն
 ճանապարհ հաստանել ընդ մէջ վը-
 տանդից և մթուէց ողորմ կենցա-
 ղոյս, և ողջանդամ հաստանել յան-
 քոյթն նաւահանգիստ: Եւ յիւրմէ
 կողմանէ փոյթ 'ի մէջ առնու՝ միա-
 բանութիւն ամենայն առաքելութեանց, և
 նպատակէք բարի բարի գործոց, զի
 ոչ կարի անարժան գտցի անմահա-
 կան երանութեան, որովմա կն ունի:

Այսպիսի է կատարեալ զգաստ
կամ համեստ տնձն , այսպիսի է
ճշմարիտ զգօնն կամ իմաստունն :
Երանի այնոցիկ՝ որք զհետ երթան
կենդանի օրինակի նորա : Եւ եթէ
չհամարձակիմք ամենայնիւ նմանող
լինել նմա , գէթ պարտիմք յոգւոց
հանել 'ի նմանել նմա ըստ կարի :
Գեղեցիկ սկիզբն է ճշմարիտ իմաս-
տութե՛ն՝ ջանալ իմաստուն և առա-
քինի լինել :

ԻՄԱՍՏՔ ՈՂՋԱԽՈՀ ՄՏԱՅ

ԿԱՄ

ՆԿԱՐԱԳԻՐ ԱՌՆ ԶԴԱՍՏԻ



Տճւր բարձրելոյն որ ինչ նըմին է
վայել .

Մի ձեռն 'ի գործ ինչ , չի խոր-
հեալ , արկաներ :

Նէր կենակից բարեաց , և մի՛ անա-
սարծիր

Փարթամ 'ի տուրս եթէ իցես
յերկնաձիր :

Յամառդ 'ի վէճ լիցիս այլոց ա-
տելի ,

Տարախոհիցն 'ի քէն կարծեաց
տճւր տեղի ,

Կըշռեւ ըստէս ինչ անարժան չէ
ըզզըոյց ,

Սակայն 'ի դէպ , մի հանճարոյ
առ 'ի ցոյց :

Մի ինչ ասեր ումէք զոր ոչ խմա-
նայն .

Անկեղծն 'ի զրոյց հաճոյ բնաւից
է մարդկան :

Հաւատարիմ կայ 'ի խոստման զոր
ետուրդ .

Այլ չե ալեւալ , առ զայն ըս-
տէս 'ի խորհուրդ :

Վարիւքդ հաճոյ և թէ 'ի բանս ես
դու հեզ ,

Ոչ լաւութիդ այդ 'ի դերեւ լիցի
քեզ :

Բարեհամբոյր լիջիր , այլ մի ըն-
տանի .

Մի ինչ վըճռեր , մինչ չե խոր-
հեալ զայն կարի :

Տիպք են բարւոյ սիրել շահուց ան-
խընդիր .

Պատուեա զաւագս , մի վատնու-

ցին դու շընթիր :

Ներեա ղյանցանս , և բարեկամս
արա քեզ .

Զհերձուած և ղգատ յանձնէ 'ի
բաց մերժեսցես :

Մի բնաւ 'ի գործ ինչ օտարին խառ-
ներ փոյթ .

Յորմէ քեզ զեան հասցէ , ծած-
կելն է անքոյթ :

Որոց բարի առնել կամիս՝ ընտրես ,
ջեր .

Եւ մի՛ չափով փոխարիներ ըզ-
կըշիւ :

Հրաժարեսջեր յոր և է բախտ յան-
չափից .

Այլուհն անձին միշտ եղիցի ծաղ-
րալից :

Մի զբարեկամ քո լըքաներ , տար
նըմին .

Եւ կարեկից լեր դու 'ի վիշտս օ-
տարին :

Արիութեամբ ղինեսաց ընդդէմ ար-
կածից ,

Եւ մի տար միշտ բարեկամաց
ընդ քեզ կից :

Խաղաղարար լեր գլխունց , և
յաւէժ

Ըղղըրկանաց լոյժ երախտեօք ըղ-
վըրէժ :

Անգառն 'ի խրատ , անշողոքորդ
լեր 'ի գով .

Դարձո զկատակ , ժըպիտ ելցէ
քեզ մեղմով :

Համարեսցիր զանձնիւր յարուեստ
քո հըմուտ ,

Եւ մի 'ի ցոյց հանճարոյ դէտ
կար 'ի սոգիւտ :

Թաղեա 'ի սիրտ քո զերախտեացդ
ըղհանդէս ,

Զի կորընչին վարձք քո թէ զայն
երախտես :

Հաս 'ի կարիս բարեկամիդ յօդնու-
թիւն .

Դրացի առատն է շրուայլին , կայ
արթուն :

Շիջո զցասումն յարծարծ տնէլն իւր

այն ինչ .

Զհեռաւորէն խօսեաց բարին
կամ մի ինչ :

Շնորհակալիք նախկին պարտիք ե՞ն
մարդկան .

Չիք քան զպարտեացս այս մո-
ռացող չար գաղան :

Թէ ղխաղ սիրեա , մի ղայն անձին
առնէր պէտ .

Առ 'ի զբօսանս արկ ղայն 'ի կիր
իր ասպետ :

Քան ղժամանակն ինչ չիք 'ի կեանս
յայս 'ի վեր .

Վարեա յօգուտ , և մի 'ի ղուր
ղայն վատներ :

Լեր սուղ 'ի բան , ձիգ 'ի խորհուրդ .
ատեա զդաւ .

Ընկալ ըղտուրս յուամէ և այն
տուցի բնաւ :

Բըռնաւոր է որ զպարտապանն ընկ .
ճէ զիւր .

Մարդասիրեա և լուր նըմին մը-
տագիւր :

Մի ընդ բարին այլոց մաշիր նա-
խանձու .

Եւ մի գաղտնեաց ուրուք լիցիս
մատընտու :

Մի զոք խոտեր , մի՛ լինիր յանձն
ապաստան .

Կեանս խնայանոյ վարել ի-
մաստքս այս քեզ տան :



ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆԷ

էջ .

- | | | |
|----|---------------------------|---|
| 1 | Նախերգանք հմմ Առաջաբ- | |
| | նախնիան ճառարին . . . | 1 |
| 2 | Հառապի ատեն զգօնի . . . | 1 |
| 3 | Կրօն և անժառանգութի . . . | 2 |
| 4 | Ճշմարտասիրութի . . . | 3 |
| 5 | Քաղցր կենակցութի . . . | 4 |
| 6 | Չկա՞նք զէնս ընկերին . . . | 5 |
| 7 | Առաքինի կենցաղ զգօնի ըստ | |
| | երբեմնի փեսայի . . . | 6 |
| 8 | Պապանել զծնողս ծերոս- | |
| | նիս և զհարկնադիրս ծա- | |
| | նանակին . . . | 6 |
| 9 | Երախտագիտութի . . . | 7 |
| 10 | Բարերարութի . . . | 7 |
| 11 | Աղաքահան կերպ Բարերար- | |

	բելոյ	8
12	Ասելուք ի նախանշոյ . . .	9
13	Գաղաթիւացի հասարակական պաշտօնք	10
14	Զգոտութիւնն 'ի բանս . . .	11
15	Խելամստութիւնն ի բնի տրպի- սի	11
16	Ձեռնադրութիւնն ի արարելոյ գոյն	13
17	Փոյլ համբարաց անշին . . .	15
18	Տիբապէս պարտւոյն իցէ	16
19	Անյիշատակութիւն	16
20	Զիմրէ լարելի իցէ ընդ լինարս	17
21	Սահասարկութիւն	18
22	Զգոտութեանքն 'ի բանս . . .	18
23	Ի բարին մեկնել զայլոց բարս	20
24	Չլինել բերանաւոյ	20
25	Ճշմարիտ աշխատանքս 'իցէ	21
26	Արիւնքն 'ի յառաջակ	22

- 27 Կարէիցոս-Բիւն ընկերին քա-
ռապանս 25
- 28 Ուղղել զանձին Բերո-
ւի 26
- 29 Գովել զայլս 27
- 30 Կապանի, և զԲարդ Վարելի
'ի նոսա 28
- 31 Խորշոտի ցտտանձնական ըն-
քանդակելէ, ճանապարհ ան-
կրօնից և ի ճանապարհաց . . . 28
- 32 Ընթերցան Բարեկամաց . . . 30
- 33 Կենսիցոս-Բիւն ընդ արս ար-
գոյս հասասարակիցս . . . 31
- 34 Չաւել ինչ Բան 'ի Քասո
այլոց 31
- 35 Չաւարճախօսոս-Բիւն որպի-
սի 33
- 36 Խորհրդակցոս-Բիւն և ըն-
թերցան լասին 33
- 37 Դիւրահասանոս-Բիւն . . . 35
- 38 Չլսապահիլ ցանձն 35
- 39 Գինեհարոս-Բիւն իմ արբե-
ցոս-Բիւն 36
- 40 Խաղ 37

41	Չափաւորութիւն քնոյ եւ կէ- րակոյ	37
42	Խաղ եւ զբօսանք	38
43	Շաւղաւթիւն եւ Ագահո- ւթիւն	39
44	Յարգ ծաճանակի	40
45	Զգօնն լէ արտաւ, այլ խըն- դարի	40
46	Գոհ լինել ընդ Վիճակ, ան- յին եւ Չափաւորութիւն	42
47	Մեծութիւն եւ փոքր	43
48	Հարստութիւն	43
49	Ճշմարիտ երջանկութիւն	44
50	Աւարտ ճառին	46



RITRATTO
DELL'
UOMO ONESTO
E
DEL SAGGIO



VENEZIA
SAN LAZZARO

1836





EL SAGGIO

LIBRARY

1874

RITRATTO

DELL'

UOMO ONESTO

E

DEL SAGGIO.

Se volgiamo i nostri sguardi su tutta quanta la terra, possiamo noi scorgere cosa o più grande, o più bella o più ammirabile, che il vero sapiente, il perfetto onest' uomo, quale noi ci piacciamo di rappresentarlo?

Egli dall' aperta testimonianza dell' universo convinto dell' esistenza di un Ente Supremo, di cui tutto narra la gloria, tutto annunzia il potere, tutto dimo-

stra la grandezza, è intimamente commosso dal timor di Dio, principio di ogni sapienza; e paventa i tremendi castighi che Dio riserba ai violatori della sua legge, e più che qualunque male del mondo, abborre ciò che a lui dispiace.

